

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐՆ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Լեզվական սխալ գործածությունները, ցավոք, մեր իրականության մեջ բավական տարածված են: Հաճախ նկատվում են անմիօրինականություններ, ընդունված կանոններից շեղումներ: Դրանք նկատվում են լեզվական տարբեր մակարդակներում: Այս իրողությունների մասին շատ է խոսվում: Վերջինների տարածմանը նպաստում են և՛ զանգվածային լրատվության միջոցները, և՛ համացանցը, և՛ հեռուստատեսությունը: Այս սխալները, որպես կանոն, առօրյա-խոսակցական լեզվի սխալ կիրառություններն են: Բայց դա միշտ չէ, որ այդպես է: Լինում է նաև այնպես, որ վերը նշված ոլորտներում տարածում գտած լեզվական սխալ կիրառությունները՝ որպես լեզվական ճիշտ կիրառություններ, անցնում են առօրյա-խոսակցական լեզու¹:

«Լեզվական նորման հանրության կողմից ընդունելություն գտած, օրինականացված լեզվական (արտասանական, հնչյունային, բառային, դարձվածային, քերականական ու ոճական) միջոցների ու ձևերի ճշգրիտ ու կանոնակարգված գործածությունն է»²:

Լեզվական նորմաներից շեղումներն էլ համարվում են լեզվական սխալներ: Սույն հոդվածում մենք անդրադառնում ենք արդի հայերենի քերականական մի շարք սխալների: Ներկայացնում ենք հիմնականում ՁԼՄ-ների, համացանցի և հեռուստատեսության քերականական սխալները: Ինչպես արդեն նշել ենք, լեզվական սխալների տարածմանը հատկապես նպաստում են զանգվածային լրատվական միջոցները, սոցցանցերի գրառումները: Այդպիսի տարածված սխալներից են *շնորհակալություն բոլորից* (փոխ.՝ շնորհակալություն բոլորին), *շնորհակալություն եմ հայտնում բոլորից* (փոխ.՝ շնորհակալություն եմ հայտնում բոլորին), *երախտապարտ եմ քեզինից* (փոխ.՝ երախտապարտ եմ քեզ) ձևերը: Նմանատիպ սխալները շատ տարածված են և կիրառվում են ճիշտ ձևերին զուգահեռ՝ առանց զանազանվելու: Սովորույթի ուժով մարդկանց մի մասը ճիշտ ձևերն է կիրառում, մյուս մասը՝ ոչ:

Լեզվական սխալ կիրառություններ լինում են նաև օտար լեզուներից *պատճենումների* հետևանքով, երբ տվյալ իրողությունը հատուկ չէ մեր լեզվին, օրինակ՝ *բանը նրանում է/բանը կայանում է նրանում* (փոխ.՝ բանն այն է), *նա հանդիսանում է գրող* (փոխ.՝ նա գրող է), *ակնոց հագնել* (փոխ.՝ դնել), *դպրոցը դա մեր երկրորդ տունն է* (փոխ.՝ դպրոցը մեր երկրորդ տունն է) և այլն: Վերջին օրինակը

¹ Տե՛ս Լ. Մուրադյան, *ՁԼՄ-ի լեզուն անադարտ պահելու առաջարկ*, Երիտասարդ լեզվաբաններ. Գիտական հոդվածների ժողովածու, Ե., Աստղիկ, 2016, էջ 91:

² Հ. Զ. Պետրոսյան, *Հայերենագիտական բառարան*, Ե., Հայաստան, 1987, էջ 260:

վերաբերում էր կրկնակի ենթակային, որը հայերենին հատուկ չէ, սակայն կիրառության սահմանները բավական մեծ են:

Բանավոր խոսքում հաճախ կիրառվում են բառեր, որոնք ավելորդ են, խոսքին լրացուցիչ բովանդակություն չեն հաղորդում, չեն նպաստում խոսքն արագ ու ավելի արդյունավետ ընկալելուն, ծանրաբեռնում են խոսքը: Այսպիսի արտահայտություններ հիմնականում կիրառվում են ոչ պաշտոնական, առօրյա շփման ընթացքում, կենցաղում և այլն³: Նշենք, որ համացանցային լեզուն լեցուն է *ավելորդաբանություններով*: Օրինակ՝ *նա հանդիսանում է գրող* (փոխ.՝ *նա գրող է*), *եկեղեցին՝ դա մեր սրբությունն է* (փոխ.՝ *եկեղեցին մեր սրբությունն է*), *դպրոցները՝ դրանք կրթության օջախներ են* օրինակներում առկա են ավելորդաբանություններ: Առաջին օրինակում *հանդիսանալ* բառն ավելորդաբանություն է, քանի որ *է* օժանդակ բայն իր մեջ արդեն ունի հանդիսանալ, լինել իմաստը: Հաջորդ օրինակներում տեսնում ենք կրկնակի ենթակա (*եկեղեցի և դա, դպրոցներ և դրանք*), իսկ հայերենին հատուկ չէ կրկնակի ենթական: Այս իրողությունը մեր լեզու ներթափանցել է ռուսերենի ազդեցությամբ՝ ռուսերենից բառացի թարգմանելու հետևանքով: Մեր ուսումնասիրությունների ընթացքում հանդիպել են նաև այնպիսի արտահայտություններ, որոնցում միևնույն իմաստ արտահատող երկու բառ է գործածվում, որն էլ անհարկի կրկնության առիթ է դառնում: Նույն արտահայտության մեջ գործածվում են *կրկին-անգամ, հետ-միասին, էլ-նույնպես* բառերը, ինչպես՝ *միջոցառման մասին կրկին անգամ կտեղեկացնենք, ձեզ էլ դա նույնպես թվաց, մենք դա ձեզ հետ միասին կքննարկենք* : Ճիշտ է՝ *միջոցառման մասին կրկին կտեղեկացնենք* կամ *միջոցառման մասին ևս մեկ անգամ կտեղեկացնենք, ձեզ էլ դա թվաց* կամ *ձեզ դա նույնպես թվաց, մենք դա ձեզ հետ կքննարկենք* կամ *մենք դա միասին կքննարկենք*:

Լեզվական տարածված սխալ է *ենթակայի և ստորոգյալի անհամաձայնությունը*: Համաձայնությունը կապակցման այն եղանակն է, որի դեպքում իրար կապակցվող բառերը դրվում են քերականական միևնույն կարգով, օրինակ՝ *միևնույն դեմքով, թվով և այլն*: Ենթական և ստորոգյալը սովորաբար համաձայնում են դեմքով և թվով⁴: Թե՛ համացանցում, և թե՛ էլեկտրոնային մամուլում հանդիպել են հետևյալ օրինակները. «*Վաճառվում է բնակարաններ*» (փոխ.՝ *վաճառվում է բնակարան*), «*Գործում է մեծ զեղչեր*» (փոխ.՝ *գործում են մեծ զեղչեր*), «*Շտապ անհրաժեշտ են վաճառող-խորհրդատու*» (փոխ.՝ *Շտապ անհրաժեշտ է վաճառող-խորհրդատու*), «*Պահանջվում է մենեջեր, վաճառողուհի, հավաքարար*» (փոխ.՝ *Պահանջվում են մենեջեր, վաճառողուհի, հավաքարար*), «*Կայուն հարաբերություններում պատասխանատու է թե կինը, թե տղամարդը*» (փոխ.՝ *կայուն հարաբերություններում պատասխանատու են թե կինը, թե տղամարդը*):

³ Մ. Սարգսյան, *Ավելորդաբանություններ Երևանի խոսակցական լեզվում*, Երիտասարդ լեզվաբանների հանրապետական 4-րդ գիտաժողովի զեկուցումներ, Ե., Ասողիկ, 2014, էջ 56:

⁴ Լ. Ղամոյան, Մ. Սարգսյան, Ա. Քարտաշյան, *Երևանի խոսակցական լեզուն*, Ե., Մունետիկ, 2014, էջ 85:

Հավաքական գոյականները, որոնք ձևով եզակի են, բայց ունեն հոգնակիի իմաստ, երբեմն համաձայնվում են ձևային կողմով և ունենում են եզակի թվով ստորագյալ, ինչպես՝ *Հայ ժողովուրդը պատմության ընթացքում շատ են տեղահանումների ենթարկվել (փոխ.՝ Հայ ժողովուրդը պատմության ընթացքում շատ է տեղահանումների ենթարկվել):*

Հանդիպում ենք նաև այնպիսի դեպքեր, որոնցում անհամաձայնության պատճառ է այն, որ բացահայտյալը եզակի թվով է, իսկ բացահայտիչը՝ բազմակի: Այդ դեպքում հաճախ ստորոգյալը դրվում է հոգնակի թվով՝ համաձայնելով ոչ թե բացահայտյալի հետ, այլ բացահայտչի: Օրինակ՝ *Ամեն ինչ՝ դպրոցը, ընտանիքը, ազդում են երեխայի մտավոր զարգացման վրա (փոխ.՝ ամեն ինչ՝ դպրոցը, ընտանիքը, ազդում է երեխայի մտավոր զարգացման վրա):*

Հավաքական գոյականները, որոնք ձևով եզակի են, բայց ունեն հոգնակիի իմաստ, ունենում են եզակի թվով ստորոգյալ: Սակայն շատ ենք հանդիպում հոգնակի ստորոգյալի կիրառություն հավաքական գոյականի հետ, ինչպես՝ *«Ամբողջ հայ ժողովուրդը այդ օրերին ոտքի էին կանգնել և իշխանություն էին պահանջում», մինչդեռ ճիշտ է՝ «Ամբողջ հայ ժողովուրդը այդ օրերին ոտքի էր կանգնել և իշխանություն էր պահանջում»:*

Թե՛ բանավոր, թե՛ գրավոր լեզվում շատ են *խնդրառական սխալները*: Խնդրառությունը շարահյուսական կապակցության այն եղանակն է, որի դեպքում բառակապակցության կամ նախադասության գերադաս անդամի թելադրանքով նրան ստորադասվող, նրան կապվող բառը դրվում է այս կամ այն հոլովով կամ ձևավորվում է որևէ կապի միջոցով: Կառավարումը առաջին հերթին հատուկ է բայ խոսքի մասին և պայմանավորված է նրա սեռով⁵: Հ. Գալստյանը նշում է, որ եթե բառակապակցության մեջ գերադասի պահանջած լրացումը խոսքի մեջ կայուն, հաստատուն ձևավորում ունի, ապա ոչ ոք չի էլ սխալվում: Բայց կան բառեր, որ կարող են լրացումներին զուգահեռ ձևավորում ունենալ՝ *խոսել գործից և խոսել գործի մասին, կառչել բազմոցին և կառչել բազմոցից, սիրահարվել մեկին և սիրահարվել մեկի վրա* և այլն: Սրանց մի մասը գրական նորմայի սահմաններում է, իսկ մի մասը՝ ակնհայտ սխալ (*սիրահարվել մեկի վրա*)⁶: Հաճախակի հանդիպող սխալներից են *շնորհակալություն հայտնել, դավաճանել և մի քանի այլ բայերով կազմված կապակցությունները*: Բավական շատ են հանդիպում նաև հետևյալ սխալ կիրառությունները. *«շնորհակալություն եմ հայտնում ընկերներիցս», «շատերը դավաճանում են հայրենիքին»*: Փոխարենը պետք է ասել՝ *«շնորհակալություն եմ հայտնում ծնողներիս», «շատերը դավաճանում են հայրենիքը»*:

Խնդրառության սխալների այլ օրինակներ հաճախ հանդիպում ենք քաղաքում փակցված կամ համացանցում տարածված գովազդներում: Այդպիսի արտահայտությունների օրինակներ են հետևյալները. *«խանութին անհրաժեշտ են*

⁵ Խ. Բաղիկյան, *Ճիշտ խոսենք հայերեն*, Ե., Լույս, 2012, էջ 84:

⁶ Հ. Գալստյան, *Ճիշտը և սխալը*, Ե., Զանգակ, 2007, էջ 58:

վաճառողուհիներ», «ավտոկանգառին պահանջվում է պահակ», մինչդեռ պետք է լինեն՝ «Խանութում անհրաժեշտ են վաճառողուհիներ», «ավտոկանգառում պահանջվում է պահակ»:

Խնդրառական սխալներ հանդիպում ենք կապային կառույցներում: Հաճախ կապերը կիրառվում են իրենց ոչ բուն և իսկական իմաստներով: Ներկայացնենք այդպիսի մի քանի օրինակ: Հետ նշանակում է միասին, հետևաբար սխալ է հետ կապի հետևյալ կիրառությունը. «Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ հայերը կոչվում էին թուրքերի հետ»: Եթե կիրառում ենք հետ կապը, միտքն ամբողջությամբ փոխվում է: Այդպիսով ստացվում է, որ հայերը թուրքերի հետ կոչվում են ռուսների դեմ, մինչդեռ ցանկանում ենք ասել լրիվ հակառակը. ուրեմն ճիշտ կլինի ասել. «Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ հայերը կոչվում էին թուրքերի դեմ» կամ «Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ հայերը ռուսների հետ կոչվում էին թուրքերի դեմ»:

Երկրորդական նախադասության պաշտոնը ճիշտ չհասկանալու պատճառով սակավ չեն նաև *որ, որպեսզի* շաղկապների սխալ կիրառությունները, որտեղ *որպեսզի* շաղկապը սխալմամբ գործածվում է *որ*-ի փոխարեն, ինչպես, օրինակ. «Հարգելի՛ ուղևորներ, պահանջե՛ք վարորդից, որպեսզի նա չծխի և չվտանգի ձեր առողջությունը» (փոխ.՝ *Հարգելի՛ ուղևորներ, պահանջե՛ք վարորդից, որ նա չծխի և չվտանգի ձեր առողջությունը*): Հետևյալ օրինակում երկրորդական նախադասությունը կատարում է ուղիղ խնդրի պաշտոն, մինչդեռ այս երկու շաղկապները համըկնում են միայն այն դեպքում, երբ ստորադաս երկրորդական նախադասությունը կատարում է գերադաս նախադասության պատճառի պարագայի պաշտոն, օրինակ՝ *Նա եկել է հայրենիք, որպեսզի/որ տեսնի իր հարազատներին*:

Հայտնի է, որ որոշիչ ստորադասական նախադասությունը գերադասին կապվում է հիմնականում *որ* և *թե* շաղկապներով և հարաբերական դերանուններով՝ *որ(ը), որպիսի, որքան, ինչ, ինչպիսի* և այլն: Այս հարաբերական դերանունները գերադաս նախադասության մեջ եղած հարաբերյալների հետ կազմում են զույգեր, ինչպես՝ *այն...որ(ը), այնպիսի...որպիսի, այնքան...որքան, այն...ինչ, այնպիսի...ինչպիսի* և այլն: Թե՛ մամուլում, թե՛ հեռուստատեսությամբ հիմնականում որպես կանոն տեսնում ենք, որ որպես կանոն ստորադաս նախադասությունը գերադասին կապվում է *ով* դերանվանբ այն դեպքերում, երբ գերադասի որոշյալը անձ ցույց տվող գոյական է (թե՛ հարաբերյալի առկայությամբ, թե՛ առանց հարաբերյալի). «Դերասանուհին, *ով ... ֆիլմում կատարում է գլխավոր հերոսուհու դերը, մանրամասներ է ներկայացրել իր անձնական կյաքից*» կամ «Էմմին *այն երգչուհիներից է, ով սկսել է իր կարիերան դեռ շատ փոքր տարիքից*»: Մինչդեռ պետք է լինի՝ «Դերասանուհին, *որը ... ֆիլմում կատարում է գլխավոր հերոսուհու դերը, մանրամասներ է ներկայացրել իր անձնական կյաքից*» կամ «Էմմին *այն երգչուհիներից է, որը սկսել է իր կարիերան դեռ շատ փոքր տարիքից*»:

Մեծ խնդիրներ են առաջանում *իմ/ինձ, մեր/մեզ, քո/քեզ, ձեր/ձեզ* դերանունների և *համար, մոտ, վրա, հետ, պես, չափ, նման, հոգուտ, հանձին, հանուն, ի դեմս*

կապերի միասնական կիրառությունների ժամանակ: Խնդիր է առաջանում, թե որ հոլովով պետք է դնել դերանունները՝ սեռական^օ, թե՞ տրական: Ճիշտ են *ինձ/մեզ/քեզ/ձեզ + համար, մոտ, վրա, հետ, պես, չափ, նման և հոգուտ, հանձին, հանուն, ի դեմս + ինձ/մեզ/քեզ/ձեզ* ձևերը՝ տրական հոլովով:

Վերջին շրջանում բավական տարածված է այն սխալ երևույթը, երբ այս կապերը կապակցվում են *ինքը* դերանվան տրական հոլովի հետ, ինչպես՝ *իրեն համար, իրեն մոտ* և այլն:

Նշենք, որ *մոտ* (նաև՝ *վրա, հետ...*) կապի հոլովված ձևերի հետ կիրառություններում դերանունները պետք է դրվեն սեռական հոլովով, ինչպես, օրինակ՝ *իմ մոտից, մեր մոտից, քո մոտից, ձեր մոտից*: Սխալ են *ինձ մոտից, մեզ մոտից, քեզ մոտից, ձեզ մոտից* ձևերը:

Շատ են հանդիպում *շարադասական սխալներ*: Ճիշտ է՝ հայերենի շարադասությունը չափից դուրս կուռ չէ, սակայն կան դեպքեր, երբ սխալը կարող է ամբողջովին փոխել միտքը: Բազմաթիվ են այն օրինակները, որտեղ շարադասության խախտումը հանգեցրել է նախադասության մտքի աղավաղմանը: Դա հատկապես նկատելի է որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունների կիրառության դեպքում: Սխալ շարադասության պատճառով որոշիչը բնութագրում է միանգամայն այլ հասկացություն: Բերենք այդպիսի օրինակներ. Հայտնի ապրանքանիշի գովազդային վահանակի վրա գրված է հետևյալ արտահայտությունը՝ «*տարածաշրջանի խոշորագույն մսամթերքի գործարան*»: Արտահայտությունից կարելի է ենթադրել, որ խոսքը խոշորագույն մսամթերքի մասին է, սակայն այստեղ խոշորագույնը գործարանի որոշիչն է: Նմանատիպ մեկ այլ օրինակ է համացանցում տարածված հետևյալ գովազդը՝ «*բարձր տաքսու գնե՞ր, գրանցվե՞ք և խնայե՞ք գումար*», որտեղ նկատի են ունեցել ոչ թե բարձր տաքսին, այլ տաքսու բարձր գինը:

Ամփոփելով՝ նշենք, որ մեր լեզվում շատ են լեզվական սխալները, իսկ դա մեծ ուշադրության է արժանի: Լեզվական սխալ գործածությունների տարածմանը նպաստում են և՛ զանգվածային լրատվության միջոցները, և՛ համացանցը, և՛ հեռուստատեսությունը: Լեզվական սխալ կիրառությունների պատճառ են լինում նաև օտար լեզուներից պատճենումները: ՋԼՄ-ներում, համացանցում և հեռուստատեսությունում հանդիպող լեզվական տարածված սխալներից են ենթակայի և ստորոգյալի անհամաձայնությունը, կապային սխալ կիրառությունները, շարադասական սխալները և այլն: Նկատել ենք, որ թեև բառապաշարային սխալները գերազանցապես անգլերենից կատարվող փոխառությունների հետևանք են (մինչդեռ նախկինում ազդեցությունը հիմնականում ռուսերենից էր), ապա շարահյուսական սխալները ինչպես նախկինում, այնպես էլ այժմ ռուսերենի ազդեցության հետևանք են:

Չնայած հանդիպող սխալների առատությանը՝ պետք է փաստենք, որ նկատում ենք նաև սխալները շտկելու միտում: Օրինակ՝ *դերանուն+կապ* ճիշտ կիրառությունները վերջին շրջանում հաճախական են դարձել:

Хачибабян Наира Парсамовна – Грамматические ошибки в современном армянском языке. – В статье рассматриваются грамматические ошибки, встречающиеся в современном армянском языке. Нами исследованы синтаксические ошибки, неправильное употребление предлогов, ошибки в управлении и согласовании. В частности, рассматриваются примеры из средств массовой информации, интернета, телевидения, параллельно приводятся правильные и рекомендуемые варианты.

Khachibabyan Naira – Grammatical Errors in Modern Armenian – The article presents grammatical errors found in Modern Armenian. We have touched upon disagreements, incorrect usage of linking words, syntactic, errors of grammatical suggestion. We have examined examples from the mass media, the Internet, television, and simultaneously presented their correct and recommended versions.